Արձանագրություն 3

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-20/45» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 30.09.2020թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Լևոն Ադամյան - Գլխավոր տնօրենի տեղակալ-գլխավոր ճարտարագետ (ԳՊ/ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝

Արամ Ասատրյան - Տեխնիկական բաժնի պետ (ԳՊ/ԳԱ)

Արտավազդ Ավետիսյան - Տեխնիկական բաժնի ներդրումային ծրագրերի իրականացման գծով առաջատար ճարտարագետ (ԳՊ/ԳԱ)

Արսեն Ղարախանյան - Վերահսկման և գույքի կառավարման բաժնի ճարտարագետ-նախագծող (ԳՊ/ԲԱ)

Գոռ Թադևոսյան - Գնումների և մատակարարման բաժնի շուկայագետ (ԳՊ/ԲԱ)

Գնումները համակարգող՝

Մելինե Սողոյան - Գնումների և մատակարարման բաժնի առաջատար մասնագետ

Բացակայում է հանձնաժողովի անդամ վերահսկման և գույքի կառավարման բաժնի ներդրումային ծրագրերի շինարարության գծով մասնագետ (ԳՊ/ԳԱ) Լևոն Աթոյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտ ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և տվյալները

1.1«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-20/45» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել.

- «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ն՝ ՀՎՀՀ 00902375, էլ. հասցե՝ tender@volios.am
- «Հազարաշեն» ՍՊԸ-ն՝ ՀՎՀՀ 01816381, էլ. հասցե՝ hazarashen@mail.ru

1.2 Համակարգում 30.09.2020թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

2. Տվյալներ մասնակիցների հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը, բացառությամբ Հազարաշեն ՍՊԸ-ի նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը (կամ պայմանագրերը) և դիմում հայտարարություն գնանշման հարցմանը մասնակցելու՝ հավելված 1-ը, որոնք մասնակիցը համակարգով չէր կցել, սակայն հայտերի բացումից հետո մասնակիցը դրանք ներկայացրել է էլեկտրոնային եղանակով, որը հանձնաժողովի կողմից համարվել է ընդունելի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

3. Տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունել է որոշում՝ կողմ - 4 դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 220/110/35 կՎ «Շինուհայր» ենթակայանի վերակառուցման նախագծերի ճշգրտման և նախահաշվային փաստաթղթերի կազմման նպատակով խորհրդատվական ծառայություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս:	
	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ՀՀ դրամ
«Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ	1708333	2050000
«Հազարաշեն» ՍՊԸ	4600000	4600000

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 2 220 կՎ «Ագարակ-2» ենթակայանի վերակառուցման նախագծերի ճշգրտման և նախահաշվային փաստաթղթերի կազմման նպատակով խորհրդատվական ծառայություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս:	
	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ՀՀ դրամ
«Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ	916667	1100000
«Հազարաշեն» ՍՊԸ	1800000	1800000

Հրավերի վերաբերյալ սույն թվականի սեպտեմբերի 18-ին ստացվել է պարզաբանման հարցում, որին նույն օրը տրամադրվել է պարզաբանում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

5.1 «Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ գնային առաջարկների նվազեցման նպատակով բանակցությունների հրավիրել «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ին և «Հազարաշեն» ՍՊԸ-ին սույն թվականի հոկտեմբերի 2-ին, ժամը 11:00-ին (30 րոպե տևողությամբ) ք. Երևան Զ. Անդրանիկի փող. 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լևոն Ադամյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արամ Ասատրյան

Արտավազդ Ավետիսյան

Արսեն Ղարախանյան

Գոռ Թադևոսյան

Գնումները համակարգող՝ Մելինե Սողոյան